ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- օգոստոսի 2024 թվականի №-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի №489Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետը, 28-րդ հոդվածի 1-ին կետի «ը» ենթակետը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 19-ի №180-Ն որոշմամբ հաստատված կարգը և հաշվի առնելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2024 թվականի փետրվարի 28-ի №Ե-336-24, հուլիսի 3-ի №Ե-2478-24 և օգոստոսի 2-ի №Ե-3073-24 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 15-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2018-2027 թվականների ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին» №489Ա որոշման՝

1) մեջ «2018-2027» թվերը փոխարինել «2018-2034» թվերով,

2) 2-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետում «248 164,9» թիվը փոխարինել «439 395,8» թվով,

բ. 1-ին ենթակետի «ա» պարբերությունում «146 046,7» թիվը փոխարինել «135 759,0» թվով,

գ. 1-ին ենթակետի «բ» պարբերությունում «24 349,1» թիվը փոխարինել «84 563,0» թվով,

դ. 1-ին ենթակետի «գ» պարբերությունում «24 500,0» թիվը փոխարինել «146 424,0» թվով,

ե. 1-ին ենթակետի «դ» պարբերությունում «46 758,1» թիվը փոխարինել «60 628,1» թվով,

զ. 1-ին ենթակետի «ե» պարբերությունում «6 511,0» թիվը փոխարինել «12 021,6» թվով,

է. 2-րդ ենթակետում «№1 հավելվածի 7-րդ կետով և №2 հավելվածով» բառերը փոխպարինել «№1 հավելվածի 4-րդ կետով և №2 հավելվածի 4-րդ ու 5-րդ կետերով» բառերով,

ը. 2.1-ին ենթակետում «№1 հավելվածի 1-6-րդ և 8-րդ կետերով» բառերը փոխարինել «№1 հավելվածի 1-3-րդ և 5-րդ կետերով ու №2 հավելվածի 1-3-րդ կետերով» բառերով,

թ. 3-րդ և 4-րդ ենթակետերում «2021 թվականի» բառերը փոխարինել «2021 թվականին սահմանված» բառերով,

ժ. 5-րդ ենթակետում «2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով» բառերը փոխարինել «2019 թվականի դեկտեմբերի 25-ի №523-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրա-էներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոններով» բառերով,

3) №№1-5 հավելվածների 2024-2027 թվականների հատվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման №№1-5 հավելվածների 2024-2027 թվականների հատվածների և հավելվածները լրացնել 2028-2034 թվականների հատվածներով՝ համաձայն սույն որոշման №№1-5 հավելվածների 2028-2034 թվականների հատվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- օգոստոսի 2024թ.